

իրը սովորութիւն կը շարունակուէր ԺԹ դարուն: Անգլիացի John Fuller 1818ին Պրուսա տեղացի հայ վաճառականներու հետ որսի կ'երթայ, որոնք որսէն վերջ «հրամայեցին իրենց գորգերը սփռել, եւ անոնց վրայ նստան ծիւղելու եւ սուրճ խմելու համար»⁽¹¹⁵⁾:

ԺԸ դարուն՝ տան ներքին կարասիներուն զլխաւորը դարձեալ գորգն է: 1715ի Սեպտ. 4ին՝ Bell Պաքուի մէջ հայ վաճառականի մը կողմէ կ'առաջնորդուի պարսիկի մը տունը, ուր «գետինը գորգեր փռուած էին»⁽¹¹⁶⁾: 1788ին Իռլանտացի Buck Whaley Թուրքիոյ տուններուն մասին կը վկայէ որ «իրենց սենեակներուն կարասին կը բաղկանայ մեծ ու փոքր գորգերէ՝ սփռուած պատին երկայնքը»⁽¹¹⁷⁾:

Մերձաւոր Արեւելքի մէջ գորգերու գործածութեան մասին բաղմաթիւ տեղեկութիւններ կան առասպելապատում «Հաղար եւ Մէկ Գիշերներ»ու պատմութեան մէջ:

Գալով բուն հայ տան մասին՝ ԺԹ դարէն ունինք բաղմաթիւ վրկայութիւններ: Pierre-Amedee Jauber Փրանսացին 1806ին Պայագիտի Արծաթի հայ աւանին մէջ կը ստիպուի գիշերել. գիւղին աւելոր քէհեան տան բակը «բերել սուաւ փսիաթներ, գորգեր, ջուր, կաթ եւ բրինձ, հիւրերուն համար»⁽¹¹⁸⁾: 1817ին Moritz Von Kotzebue Երեւանի շրջանի տուններուն կահաւորումը նկարագրած ատեն կ'ըսէ. «գետինը քարէ է, եւ ծածկուած գորգերով՝ ունեւորներէ, իսկ խշտեակներով՝ աղքատներէ»⁽¹¹⁹⁾: Անգլիացի գնդապետ John Johnson 1817ին Նախիջևեան հանգիստներուն կը գրէ. «մենք հայու մը տան եւ պարտէզին մէջ կեցանք... անիկա գորգեր սփռեց, բարձեր տեղաւորեց, մեզի ջուր եւ հաց բերաւ, ու ամէն ինչ որ ան կ'ենթադրէր թէ կը ցանկայինք»⁽¹²⁰⁾: 1814ին John Macdonald Kinneir Կեսարիայէն Տարսոն երթալուն՝ կը հիւրասիրուի հայ վաճառականէ մը, որ իր հիւրանոցը կը տրամադրէ այս անգլիացիին. ասոր վկայութեան համաձայն սենեակները «ծածկուած են Թուրքիոյ ազնիւ գորգերով»⁽¹²¹⁾: Ամերիկացի միախոնարներ՝ Eli Smith եւ H. G. O. Dwight, 1830ական թուականներուն Հայաստան իրենց այցելութեան՝ Տաթեւի մօտ հայկական Տեղ գիւղին մէջ կը հիւրասիրուին գիւղին հայ տանուէրէն: «Այս բանտանման յարկաբաժիններուն միակ կարասին գորգերու, անկողիններու ծածկոցներու եւ բարձերու քանի մը դէպեր էին: Գորգերը անմիջապէս սփռուեցան կրակատեղիին (օճախ) շուրջ»: Տաթեւէն կ'անցնին հայկական Լօս գիւղը, որուն հայ քէհեան իր տունը կը հիւրասիրէ: «Սենեակին մէկ մութ անկիւնը, գիշերային հանգստեան համար՝ գորգերու, անկողին-

(115) Narrative of a Tour. — London, 1830, p. 69.

(116) Իմ թարգմ. Բաղմաթիւ, 1931, էջ 206:

(117) Memoires. — London, 1906, p. 151.

(118) Ուղեգրութիւններ. — Թարգ. Յով. Յակոբեան, Երեւան, 1934, հատոր

2. էջ 152:

(119) Narrative of a Journey into Persia. — London, 1819, p. 107.

(120) A Journey from Indis to England. — London, 1818, p. 225.

(121) Journey... — London, 1818, p. 122.